ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, հեռ. +37441125156

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

24/11/2023թ. **գ.Գառնի**

2023 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի վարչական շենքում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Գառնի համայնքի ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումը:

Բաց լսումների բացման խոսքով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը, ով մասնավորապես նշեց, որ 2023 թվականի նոյեմբերի 24-ի բաց լսումների համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 09-ի № 1095 որոշումը, ըստ որի համայնքապետարանի տեղեկատվական կառավարման համակարգում տրվել է հրավերի հայտարարություն:

Մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավար Տիգրան Պողոսյանը, ապա խոսքը տրամադրեց «Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանին:

Լսումների ընթացքում, «Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանի կողմից ներկայացվեց 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն: **2024 թվականի սուբվենցիոն ծրագրերն են.**

- **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում ասֆալտապատման աշխատանքների իրականացում /3 տարվա ծրագիր, մոտ 1մլդ արժեքով/,**
- **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գազաֆիկացման աշխատանքների իրականացում /2 տարվա ծրագիր, մոտ 60մլն արժեքով/,**
- **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում խմելու ջրագծի կառուցման աշխատանքների իրականացում /2 տարվա ծրագիր, մոտ 180 մլն/,**

- **ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում փողոցների լուսավորության անցկացում /2 տարվա ծրագիր, մոտ 65մլն արժեքով/:**

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վիրապ Կարապետյանի կողմից ներկայացվեց սուբվենցիոն ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվություն, մասնավորապես նշելով ծրագրերի իրականցման կարևորությունը՝ Գառնի խոշորացված համայնքի զարգացման գործընթացում:

Խոսվեց նաև Գառնի համայնքում 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի տևողության և մոտավոր արժեքի մասին:

Տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակություն Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյանի և լսումների ներկաների միջև:

Բաց լսումները ավարտվեցին ժամը 12.^{40}-ին :

Լսելով վերոգրյալը, հանրային լսման մասնակիցները առարկություններ չհայտնեցին և կարևորելով ծրագրերի իրկանացումը, տվեցին իրենց համաձայնությունը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Գառնի համայնքի ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու որոշմանը:

Լսումների կազմակերպիչ՝ **Լիպարիտ Թադևոսյան**

Համայնքի ղեկավար՝ **Տիգրան Պողոսյան**

«Ֆինանսատնտեսագիտական
եկամուտների հաշվառման
և հավաքագրման» բաժնի պետ՝ **Արփենիկ Բաղդասարյան**

Արձանագրող՝

Հասմիկ Գրիգորյան